

**Հարցաշար**  
**«Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի**  
**մարզային փուլ**  
**11-րդ դասարան - 120 րոպե**

№ 1-8

**Ընտրովի պատասխանով առաջադրանքներ**

1. Քանի՞ գրքերից է բաղկացած Նոր Կտակարանը. (0,5 միավոր)  
1) 4      2) 12      3) 15      4) 27
  
2. Ի՞նչ է կոչվում եկեղեցու օծման հանդիսավոր արարողությունը. (0,5 միավոր)  
1) Նավակատիք    2) Խաչօրհներ    3) Հիմնօրհներ    4) Նախատոնակ
  
3. Նշվածներից ո՞րը տաղավար տոն չէ.  
1) Հիսուս Քրիստոսի Պայծառակերպություն    2) Մարիամ Աստվածածնի Վերափոխում  
3) Ավետում    4) Խաչվերաց
  
4. Պատմիչ Ստեփանոս Օրբելյանի վկայությամբ քանի՞ եպիսկոպոսական աթոռ հիմնեց Գրիգոր Լուսավորիչը Մեծ Հայքում: (0,5 միավոր)  
1) 18      2) 25      3) 36      4) 44
  
5. Հայոց ո՞ր կաթողիկոսի օրոք հաստատվեց «Պոլոժենիեն»: (0,5 միավոր)  
1) Դանիել Ա Սուրմառեցի    2) Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցի  
3) Հովհաննես Ը Կարբեցի    4) Ներսես Ե Աշտարակեցի
  
6. Ու՞մ ջանքերով, Հայոց եկեղեցու հետևորդներին և կաթոլիկ հայերին միավորելու նպատակով, Կ.Պոլսում ստեղծվեց «Համազգյաց» ընկերությունը. (0,5 միավոր)  
1) Մուրադյան և Ռաֆայելյան վարժարանների շրջանավարտների  
2) Սկյուտարի ճեմարանի շրջանավարտների  
3) Արմաշի դպրեվանքի շրջանավարտների  
4) Գևորգյան ճեմարանի շրջանավարտների
  
7. Պատարագի այդ հատվածը սկսվում է, երբ հացն ու գինին բերվում են Սուրբ Սեղանի վրա, և պատարագիչ քահանայի աղոթքներով և աստվածային զորությամբ սրբազործվում: (0,5 միավոր)

- 1) Երախայից պատարագ
- 2) Արձակում
- 3) Պատրաստություն
- 4) Հավատացելոց պատարագ

8. Հայ ո՞ր փիլիսոփայի արձանն է կանգնեցվել Հռոմում նրա կենդանության օրոք՝ հետևյալ մակագրությամբ. «Տիեզերքի թագուհի Հռոմը՝ ճարտասանության արքային»:  
(0,5 միավոր)

- 1) Անանիա Շիրակացի
- 2) Պարույր Հայկազն
- 3) Դավիթ Անհաղթ
- 4) Եզնիկ Կողբացի

**№ 9-12**

**Կառուցված պատասխանով առաջադրանքներ**

9. Թադեոս առաքյալն Ավետարանում հիշատակվում է նաև -----  
անունով: (1 միավոր)

10. 1828 թ. հունվարին Կովկասում ռուսական բանակի գլխավոր հրամանատար Պասկևիչի միջնորդությամբ Ներսես Աշտարակեցուն շնրհվում է -----  
----- շքանշան: (1 միավոր)

11. ----- գրում է. «Միրո մեջ երկյուղ չկա, և կատարյալ սերը հեռու է վանում երկյուղը, որովհետև երկյուղը տանջանքի ենթակա է, և ով երկնչում է, կատարյալ չէ սիրո մեջ»: (1 միավոր)

12. Ձիրավի ճակատամարտի ողջ ընթացքում, Նպատ լեռան գագաթին, Հայոց կաթողիկոս - ----- ձեռքերը վեր բարձրացրած, անդադար աղոթում էր՝ խնդրելով Աստծո աջակցությունը: (1 միավոր)

**№ 13-14**

Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 4 փաստից

13. Հայոց կաթողիկոսների անունը համապատասխանեցնել նրանց օրոք աթոռանիստ կենտրոն դարձած տեղանվանը.

(1 միավոր)

- 1) Գևորգ Բ Գառնեցի
- 2) Գրիգոր Գ Պահլավունի
- 3) Հովհաննես Ե Դրասխանակերտցի
- 4) Անանիա Ա Սոկացի
- 5) Բարսեղ Ա Անեցի
- ա) Սիս
- բ) Ջվարթնոց
- գ) Արգինա
- դ) Աղթամար
- ե) Հռոմկլա
- զ) Շուղրի Կարմիր վանք

1	
2	
3	
4	

14. Առաքինություններն ու մոլությունները համապատասխանեցնել միմյանց.

(1 միավոր)

- 1) Ժուժկալություն      2) հեզություն  
3) ողորմածություն      4) ողջախոհություն  
5) խոնարհություն  
ա) բարկություն      բ) հպարտություն      գ) բղջախոհություն  
դ) ազահություն      ե) որկրամոլություն      զ) նախանձ

1	
2	
3	
4	
5	

№ 15-17

**Աշխատանք սկզբնաղբյուրով**

15. «Անցյալի պատմությունը մի լուսավոր լապտեր է, որ ամեն մի ժողովուրդ ձեռքին պետք է ունենա իր ճամփեն անմոլոր գնալու համար»:

Ո՞վ է մեջբերված խոսքերի հեղինակը:

(1 միավոր)

16. «Աստվածապաշտ երկրի համար համարձակ մեռեք, որովհետև հենց այդ մահն Աստծո համար է»:

Ո՞ր պատմիչն է մեջբերված խոսքերի հեղինակը:

(1

միավոր)

17. «Սուրբ Հոգին սրան մատնացույց արեց՝ նստելու իր նախահայր սուրբ Գրիգոր Լուսավորչի աթոռին, դրա համար էլ նա՝ հեզությամբ և ամենայն արդարությամբ օժտված մարդը, երկրորդ Գրիգոր անունն ստացավ: ...Նա հայոց ժողովրդի մեջ պայծառացրեց վանական դասը, նա էր, որ վերականգնեց սուրբ Գրիգոր Լուսավորչի աթոռը Հայաստանում և փայլեց սրբությամբ և ամենայն պարկեշտությամբ: Նա պահեցող էր և աղոթող»:

1) Ո՞ր պատմիչի աշխատությունից է վերոհիշյալ հատվածը: (1 միավոր)

2) Ո՞ր կաթողիկոսի մասին է պատմիչի խոսքը:

(1 միավոր)

№ 18-19

Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի  
իմացություն և խմբավորում պահանջող առաջադրանքներ՝ 2 ճիշտ պատասխանով

18. Թվարկված հոգևոր-բարեպաշտական սովորություններից որո՞նք են միայն հայոց  
ազգային-քրիստոնեական արարողակարգին բնորոշ հոգևոր-բարեպաշտական  
սովորություններ.

(2 x 1 = 2 միավոր)

- 1) աղօրհներբ
- 2) տնօրհներբ
- 3) մյուռոնօրհներբ
- 4) ջրօրհներբ
- 5) ուխտագնացություն
- 6) Խաղողօրհներբ


19. Բերված փաստարկներից ո՞ր երկուսն են ճիշտ.

(2 x 1 = 2 միավոր)

- 1) Հովհաննես Դրասխանակերտցին Աստծո մասին գրել է. «Ինքն ամեն ինչ պարունակում է, ամեն ինչի մեջ է, ամեն ինչից վեր է, ամեն ինչից դուրս է, ամեն ինչ նրանով է և ամեն ինչ նրա փառքի համար է»:
- 2) «Եղծ աղանդոց» աշխատության մեջ Դավիթ Անհաղթը գրել է, որ թագավորները և իշխանները պետք է արդարությամբ վերցնեն հարկերը, որովհետև «յԱստուծոյ կարգեցան ի պահպանութիւն եւ ի փրկութիւն աշխարհի եւ ոչ ի կործանումն»:
- 3) «Գիրք հարցմանց» երկասիրությունում Գրիգոր Տաթևացին գրում է, որ զենքը թշնամիներին հալածելու համար է, որ Աստված զինական արվեստի միջոցով մարդուն սովորեցրեց, թե ինչպես թշնամիներից պաշտպանվի:
- 4) Լևոն Շանթը գրել է. «Մինչև որ ժողովուրդը չվարժվի անձնագոհության, չի ունենա իր ազատությունը, մինչև որ ժողովուրդը չվարժվի իր եսը ենթարկելու համայնքին, չի ունենա իր պետականությունը»:
- 5) Ռոմանոս III Արգիրիոս կայսրը բնութագրելով X դարի իրավիճակը գրել է. «Բյուզանդիան պարտական էր Հայաստանին հրաշալի զինվորներով, քանի որ X դարում հայկական ջոկատները բյուզանդական բանակի լավագույն զորամասերն էին համարվում»:


№ 20

Շարադրանք (2 միավոր)

Ներկայացնել և հիմնավորել մշակույթի էթնոպաշտպան *դերն ու նշանակությունը*: